

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: CONFESSION

Ա. Հունարենում խոստովանություն կամ դավանություն տերմինների համար կիրառվող այս նույն արմատից երկու տեսակ գոյություն ունի՝ *homologeō/exomologō*: Բաղադրյալ այս տերմինը կազմված է *homo*՝ միևնույն, *legō*՝ խոսել, և *ex*՝ ինչ-որ բանից դուրս: Հիմնական նշանակությունն է միևնույն բանը ասելը, համաձայնվելը: *Ex*-ը ավելացնում էր հանրորեն հռչակելու՝ հայտարարելու գաղափարը:

Բ. Այս բառախմբի անգլերեն թարգմանություններն են՝

1. փառաբանել
2. համաձայնել
3. հռչակել (տես՝ Մատթ.7:23)
4. դավանել
5. խոստովանել (տես՝ Եբր.4:14, 10:23)

Գ. Այս բառախումբը ունի երկու թվացյալ իրար հակասող կիրառություններ՝

1. փառաբանել (Աստծուն)
2. մեղքն ընդունել

Հնարավոր է սա ձևավորվել է մարդկանց կողմից Աստծո սրբության և իրենց մեղավորության հասկացողությունից: Գիտակցել առաջին ճշմարտությունը, նշանակում է գիտակցել երկուսն էլ:

Դ. Այս բառախմբի կիրառությունը ՆԿ-ում հետևյալն է՝

1. խոստանալ (տես՝ Մատթ.14:7, Գործք 7:17)
2. համաձայնել կամ զիջել ինչ-որ բան (տես՝ Հովհ.1:20, Ղուկ.22:6, Գործք 24:14, Եբր.11:13)
3. փառաբանել (տես՝ Մատթ.11:25, Ղուկ.10:21, Հռոմ.14:11, Եբր.13:15)
4. համաձայնեցնել՝
 - ա. անձի հետ (տես՝ Մատթ.10:32, Ղուկ.12:8, Հովհ.9:22, 12:42, Հռոմ.10:9, Փիլ.2:11, 1 Հովհ.2:23, Հայտն. 3:5)
 - բ. ճշմարտության հետ (տես՝ Գործք 23:8, 1 Հովհ.4:2)
5. հանրության առջև հայտարարել (իրավական նշանակությունը վերաձվել է կրոնական հիմնավորման, տես՝ Գործք 24:14, 1 Տիմ.6:13)
 - ա. առանց մեղքն ընդունելու (տես՝ 1 Տիմ.6:12, Եբր.10:23)
 - բ. մեղքն ընդունելով (տես՝ Մատթ.3:6, Գործք 19:18, Եբր.4:14, Հակ.5:16, 1 Հովհ.1:9)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ «ԸՆԴՈՒՆԵԼ», «ՀՎԱՍՏԱԿ», «ԽՈՍՏՈՎԱՆԵԼ, ԴԱՎԱՆԵԼ», «ԿԱՆՉԵԼ»: